

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԻՃԱԿԸ ԱՐՑԱԽՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ  
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ(1920-1923թթ)\*

Արպատ Ավանեսյան, Գրիշա Հարությունյան

Ժողովրդական կրթության գործը Արցախում խորհրդային կարգերի հաստատման նախօրյակին շատ խղճուկ պատկեր էր ներկայացնում: 20-րդ դարի սկզբին ցարական կառավարության ռեակցիոն, ազգային ճնշման քաղաքականությունը արգելակում էր ժողովրդական կրթության զարգացումը: Ցարիզմն ազգային դպրոցներում հաճախակի արգելում էր մայրենի լեզվով դասավանդումը՝ վարելով ռուսականացման քաղաքականությունը[1]:

Արցախում ժողովրդական կրթության վիճակն էլ ավելի վատթարացավ համաշխարհային առաջին պատերազմի տարիներին, հատկապես՝ 1918-1920թթ: Այդ տարիներին Ղարաբաղում ծանր վտանգներով լի կացություն էր ստեղծվել հայ հասարակության համար: Ազգամիջյան կրիվներն ու բախումները, քաղաքական ծանր իրավիճակը երկրամասում ստեղծել էին ծանր տնտեսված կացություն: Դրությունն ավելի քան օրիսական էր:

Շուշիի թեմական դպրոցի շրջանավարտ Աբրահամ Կիսիբեկյանը(1892-1973թթ.) իր հուշերում գրում է.«1918-1920 թվականները Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդի դարնությունների տարիներին ինչեր չանցան նրա գիտով և ինչպիսի հարվածներ նա չստացավ: Սակայն այս բոլոր գրկանքներից ամենասուլազին սովն էր: Ով չի տեսել նրա դաժան դենքը, նա չի կարող ամենայն մանրամասնությամբ պատկերացնել նրա զարդութելի ավելիչ ու սուլազի էռությունը: Լեռնային Ղարաբաղի օղակումն ու նրա աշխատավորության մեկուսացումը, Աղրբեջանի կառավարության կողմից կազմակերպված ավագակություններն ու կողոպուտները, անարխիան ու սպեկուլյացիան, ամենօրյա անըրիատ ներս հոսող գաղթականությունը, սովորական նորմալ աշխատանքից գրկվեց լիակատար դարձրին նրա տնտեսության բացարձակ քայլայումը, որին հաջորդեց վարակիչ հիվանդություններն ու սովը, որը սկսեց անխնան ճահ սփրել ամենուրեք: Միակ միջոցը, որ կարող էր փորձ ի շատե քաղցի ու կարիքի ծիրաններում թարսուացող հայ ժողովրդին փորեր, ամոքեր նրա վիճակը, դա ներքին միջոցների կազմակերպումն էր, որը ձեռնարկեց Շուշիում գործող հայոց բարեգործական ընկերությունը: Նա Լեռնային Ղարաբաղի շրջաններն ուղարկեց մարդկանց, որոնցից մեկն էի ես, օգնելու տարապյալ ժողովրդին: Թե ինչպիսի սուլազի տեսարանների ես ականատեսելող (ազգամիջյան կրիվներ, բախումներ, թուրքերի գիշերային հարձակումներ, կողոպուտ և այլն), այդ ամենը մանրամասն նկարագրում եմ իմ հուշերում»: «Դրությունը քանի գնաց ժանրացավ. որքան տարապեց, որքան գոհեր տվեց, որքան արցունք թափեց իմ հարազատ ու անզուգական Ղարաբաղը (1918-1920թթ.): Սակայն նրան ոչ ոք չսեց ու չկարեկցեց: Ընհակառակը, ոխակալ, խարդախ ու դաժան թշնամին՝ Աղրբեջանի կառավարությունը և նրա լակեյները, միջոցներ էին գործադրում այդ դրությունից օգտվելու, իր կեղսոտ նպատակներն իրականացնելու...»[2]:

\* Հոդվածն ընդունվել է 12.03.2015:

Հոդվածը տպագրության է Երաշխավորել ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնը:

## ՄԵՐՐՈԴ ՄԱՆՈՒՅԹ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Չնայած իրար հաջորդող ծանր քաղաքական, տնտեսական պայմաններին ու ազերի նվազողների վայրագ բռնություններին՝ արցախսահայությունը իր գոյության ամենաօրիսական պահերին անգամ(ինչպես դարեր շարունակ) երթեք չի կորցրել հոգու արիությունը և մորի սլաքը, միշտ միջոցներ ու հնարքներ է գտնել պայքարելու իր անկախության, մշակույթի և այդ մշակույթը ժողովրդի մեջ վար պահող ազգային դպրոցի համար՝ այն դիտելով որպես ազգային ինքնուրույնության դրսնորման և գոյատևման կարևորագույն գործոն:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Արցախի տնտեսության լիակատար քայլայնան և ազգամիջան կրիվների ու քաղաքական իրադարձությունների անբարենպաստ ընթացքի հետևանքով 1918-1920 թվականներին գրեթե դադարել էր գործելուց առանց այդ էլ խողճուկ դպրոցական ցանցը: Օրինակ՝ Ռուսական կայսրության սահմաններում եղած հայկական վեց թեմերում, մոտավոր հաշվարումներով, գոյություն են ունեցել շուրջ 480 հայկական-ծիսական տարրական դպրոցներ(Երևանում, Վրաստանում, նոր Նախիջևանում, Աստրախանում, Շամախում և Արցախ-Ղարաբղում): 1918-1920 թվականներին ազգամիջան կրիվների մռայլ տարներին, Ղարաբղում գործել են 22 հայկական դպրոցներ, իսկ Նովի քաղաքում՝ 8, յուրաքանչյուր դպրոցում սովորում էր 18-20 աշակերտ, դասավանդում մեկ ուսուցիչ:

1918-1920 թվականներին Լեռնային Ղարաբղ-Արցախը կառավարվել է Հայոց Ազգային խորհրդի կողմից, որը հնարավորինս չափով ապահովել է կրթօջախների համար հնարավոր տանելի պայմանները, իսկ 1920թ. ապրիլ-մայիս ամիսներին միավորվել է Հայաստանի առաջին հանրապետությանը: 1920թ. մայիսին խորհրդային 11-րդ կարմիր բանակի գորամասերը գրավեցին Լեռնային Ղարաբղը, և այն խորհրդայնացվեց: Կավճյուղոյի 1921 թ. հուլիսի 5-ի կամայական որոշմամբ Լեռնային Ղարաբղը բռնակցվեց Խորհրդային Ալղբեջանին, իսկ 1922 թվին դարձավ Խորհրդային Միության մի մասը[3]:

Այդ մռայլ տարիներին Ղարաբղում գործող հայկական դպրոցների համեմատ թիւ թե շատ բարեկարգ վիճակում էր Ռուսական տիպի ուսումնական հաստատությունը՝ Շուշիի ռեալական ուսումնարանը, որտեղ հայ աշակերտները համեմատարար մեծ թիւ են կազմել: Ժամանակակիցներից մեկը՝ աշխարհագետ, պատմաբան, մանկավարժ Ռուբեն Տեր Գասպարյանը (1919-1920թթ.), դասավանդում էր Շուշիի թեմական դպրոցում, միաժամանակ դասավանդում ռեալական ուսումնարանում և վարում գրադարանի վարիչի պաշտոնը) իր հայրենի Շուշի քաղաքի պատմությանը նվիրված գրքում մատնանշում է, որ 1918-1920 թվականներին ռեալական ուսումնարանում սովորում էր 444 աշակերտ, դասավանդում՝ 23 ուսուցիչներ: Բազմավաստով պատմաբան Լեռն Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցի պատմությանը նվիրած իր աշխատությունում նույնպես հիշատակում է այդ փաստը[4]:

Անշուշտ, Շուշիի ռեալական ուսումնարանը, իրապես լինելով հանարյա թիւ թե շատ ժամանակակից բարեկարգ դպրոցը արցախսահայ իրականության մեջ, երթեք չի փակվել և իր գործունեության ընթացքում (1881-1920թթ.) պակաս դեր չի խաղացել արցիսահայ ժղովորի հասարակական, քաղաքական ու մշակութային կյանքի զարգացման, մատադ սերնդի դաստիարակության, կրթության գրծում, քան Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցը[5], թեև նրա նման երկարամյա կյանք չի ունեցել, քանի որ թեմականը մի քանի անգամ փակվել, վերաբացվել է:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 1920թ. Շուշիի ռեալական ուսումնարանի փակումից հետո ռեալականի շենքում գործող երկրորդ աստիճանի հանրակրթական դպրոցը 1921-1922 ուսումնական տարում վերափոխվում է ուսուցչական սեմի-

## ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

նարիայի, իսկ 1922-1923 ուսումնական տարում՝ մանկավարժական ուսումնարանի՝ դառնալով ռեալիզամ ուսումնարանի իրավահաջորդը:

Սեր ծերքի տակ եղած հավաստի փաստագրական տվյալների հիմնա վրա այժմ համառոտակի ներկայացնենք Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցների ընդհանուր բնութագիրը 1920-1923 թվականներին:

Լեռնային Ղարաբաղի առաջին լուսմուկոմ Արշավիր Քամայանի գեկուցագրերից տեղեկանում ենք, որ 1920-1921 ուս.տարում ինչպես Հայաստանում, այնպես էլ Ղարաբաղում վերացվում են տարրական և միջնակարգ դպրոցների (երկաստիճան դպրոցները՝ առաջին աստիճան՝ 1-5 դասարան, երկրորդ աստրան՝ 5-9 դասարան՝ համարվում էին միջնակարգ) վերատեսուչների, տեսուչների, վերակացուների, ավագ ուսուցիչների, դասարանական դաստիարակների պաշտոնները, կրթական հոգեբարձուները, ժնողական խորհուրդները[6]: Մինչև հասուկ կանոնադրության մշակումը՝ դպրոցների անմիջական կառավարման համար ստեղծվում են դպրոցական ժամանակավոր խորհուրդներ: Դրանց կազմի մեջ էին՝

- ա) դպրոցական բոլոր աշխատողները,
- բ) սովորողների ներկայացուցիչները՝ (ժնողները), դպրոցական աշխատողների մեկ քառորդի հարաբերությամբ,

գ) ժողովրդական լուսավորության բաժնի ներկայացուցիչները:

Դպրոցական ժամանակավոր խորհրդի կազմում աշակերտական ներկայացուցիչների ընտրությանը կարող էին մասնակցել առաջին աստիճանի դպրոցների վերջին երկու խմբի աշակերտ-աշակերտուիդները, իսկ երկրորդ աստրանի դպրոցներում՝ բոլոր սովորողները:

Դպրոցական խորհուրդներն ունեցել են իրենց գործադիր մարմինը՝ նախագահությունը, որի կազմի մեջ չէին կարող մտնել 1920-1921 ուս.տարվա առաջին ամիսներին, այսինքն՝ մինչև Հայաստանում, Ղարաբաղում խորհրդային կարգերի հաստատումը՝ վերատեսի, տեսչի և ավագ ուսուցչի պաշտոնում աշխատած անձինը:

Հենց այդ խնդիրների հրականացնան են ուղղված եղել թե՝ Հայաստանի և թե՝ Լեռնային Ղարաբաղի եեղկոմի, լուսմուկոմատի և նրանց տեղական օրգանների կողմից ծեռնարկած միջոցարումները:

Այդ ուսումնական տարում, կյանքի պահանջներին համընթաց, Ղարաբաղի հայկական գյուղերում ակտիվանում է ժողովրդի հասրակական նախաձեռնությունը նոր դպրոցների ստեղծման գործում: Համենատարար մեծանում է տեղական հայ բնակչության հետաքրքրությունը լուսավորուկան գործի նկատմամբ: Հասարակությունը ցանկություն է հայտնում դպրոցի պահպանման համար նյութական միջոցներ հանգանակել և կառուցել դպրոցի շենքը: Օրինակ՝ Աբրամ Կիսիբեկյանը, որ երկար տարիներ աշխատել է Գյունե Ճարտարի դպրոցում (1913-1917թթ.), իր հուշերում գրում է, որ Վարանդա գավառում համենատարար բարեկարգ վիճակում են եղել Գյունե, Պուգե Ճարտարի, Գիշու և Խունուշինակի դպրոցները: Եթե 1916-1917 ուս.տարում Գյունե Ճարտարի երկդասյա երկանու դպրոցում սովորում են 84 աշակերտ, դասավանդում՝ 5 ուսուցիչ, Պուգե Ճարտարում՝ 23 աշակերտ, 2 ուսուցիչ, Գիշու դպրոցում՝ 70 աշակերտ, 4 ուսուցիչ, Խունուշինակի դպրոցում՝ 67 աշակերտ, 3 ուսուցիչ, ապա 1920-1921 ուս.տարում՝ նշված գյուղերի նոր տիպի առաջին աստիճանի դպրոցներում սովորում էին 35-40 աշակերտ: Միայն բարեկարգ վիճակում էր Գյունե Ճարտարի դպրոցական շենքը, որը կառուցվել է Ճարտարի հասարակության հանգանական նյութական միջոցներով: Իսկ Արշավիր Քամայանի գեկուցագրում նշվում է, որ Պուգե Ճարտարի, Գիշու և

## ՄԵՐՐՈԴ ՄԱԾՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Խունուշինակ գյուղերում դպրոցական փոքրիկ շենքը կառուցվել է 1922-1923 ուսումանական տարում[8]:

Կաստակաշատ մանկավարժ Միքայել Աղաջանյանը «Հաթերք» ծավալուն աշխատությունում հիշատակում է, որ խորհրդային շրջանի առաջին դպրոցը Հաթերքում բացվեց 1921-1922 ուսումնական տարում՝ 1-4 դասարաններով[7]: 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Խորեն Ղազարյանը «Տումի» գրքում փաստում է, որ խորհրդային կարգերի հաստատումից հետո, 1920-1921 ուսումնական տարում Տումի գյուղում բացվեց տարրական՝ առաջին աստիճանի դպրոց, որտեղ սովորում էին 26 աշակերտ, դասավանդում էր Բարվիչ Եկած Ուլիբեն անոնով վարժապետը, որը մաժամանակ հեղափոխական աշխատանք էր տանում գյուղում: Ուսումնական պարապմունքները կազմակերպում էին համագյուղացի հայրենասեր Նիկոլայ Մելքոնյանի սեփական տան երկրորդ հարկում, անվճար:

1920-1923 թվականներին Լեռնային Ղարաբաղում բացված առանձին դպրոցների պատմության մասին համառոտ տեղեկություններ են տրվում նաև պրոֆեսոր Մելքոնյանի, 20-րդ դարի լավագույն մանկավարժ Միքայել Բեզզարյանի և շատ ուրիշների աշխատություններում, հուշագրություններում[11]:

Այժմ տեսնենք թե ինչպիսի պատկեր էին ներկայացնում Լեռնային Ղարաբաղի դպրոցները 1920-1921 և 1922-1923 ուսումնական տարիներին:

1920-1921 ուսումնական տարում Լեռնային Ղարաբաղում գործող դպրոցների տիպերը, դասավանդող ուսուցիչների և աշակերտների թիվը՝ ըստ գավառների[12]:

**Աղյուսակ 1**

Բնակավարի անվամտություն	Դպրոցների ընդհանուր քանակը	Առաջին աստիճանի դպրոց			Երկրորդ աստիճանի դպրոց		
		քանակը	Աշակերտ ների քանակը	Ուսուցիչ ների քանակը	քանակը	Աշակերտ ների քանակը	Ուսուցիչ ների քանակը
Քաղաք Շուշի	3	2	64	2	1	262	18
գ. Ղարաբաղ	1	1	26	1	-	-	-
գ. Ծոշ	1	1	38	2	-	-	-
գ. Ազներ	1	1	26	1	-	-	-
գ. Քոսանի	1	1	24	1	-	-	-
գ. Հարավ	1	1	22	1	-	-	-
Վարանդա գավառ	21	21	1560	36	-	-	-
Ղիզակի գավառ	28	27	1967	45	1	168	14
Խաչենի գավառ	18	18	846	23	-	-	-
Թրաբերդի գավառ	21	21	1219	37	-	-	-

Ծուշի քաղաքում և Ղիզակի գավառում գործում էին մեկական մանկատներ, համապատասխանարար՝ 125 երեխա, 5 դաստիարակ և 60 երեխա, 3 դաստիարակ:

1922-1923 ուսումնական տարում Լեռնային Ղարաբաղում գործող դպրոցների տիպերը, դասավանդող ուսուցիչների և աշակերտների թիվը՝ ըստ գավառների:

Բնակավայրի անվանումը	Դպրոցների ընդհանուր քանակը	Առաջին աստիճանի դպրոց			Երկրորդ աստիճանի դպրոց		
		քանակը	Աշակերտ ների քանակը	Ուսուցիչ ների քանակը	քանակը	Աշակերտ ների քանակը	Ուսուցիչ ների քանակը
Քաղաք Ծուշի	10	9	711	19	1	222	16
գ. Ղարաղջլաղ	2	2	52	2	-	-	-
գ. Ծոշ	1	1	48	2	-	-	-
գ. Ազնեթ	1	1	32	1	-	-	-
գ. Քոսանի	1	1	30	1	-	-	-
գ. Քարավ	1	1	32	1	-	-	-
Վարանդա գավառ	28	28	1824	24	-	-	-
Դիզակի գավառ	28	27	1862	42	1	172	16
Խաչենի գավառ	22	22	924	26	-	-	-
Ջրաբերդի գավառ	26	26	1262	42	-	-	-

Վերոհիշյալ փաստագրական տվյալները վկայում են այն փաստը, որ նախորդ շրջանի (1918-1920թթ) համեմատությամբ, 1921 թվականից սկսած, Լեռնային Ղարաբաղում առաջին աստիճանի դպրոցների և աշակերտների թիվը կրկնապատկվել էր և Ղարաբաղի հեղկոմի կից գործող ժամանակավոր դպրոցների կառավարման հանձնաժողովը (Ար. Քամայյան, Առն Վարդունի, Հայրապետ Սուսայեցյան, Գրիգոր Տեր Պողոսյան, թժիշկ Նիկոլայ Յարամիշյան, Միհրայի Շահգելյայն և ուրիշներ) իր իրավասության տակ է կենտրոնացրել հայկական բոլոր դպրոցները: Լուսավորության աշխատողներին անգնահատելի օգնություն են ցույց տվել Ղարաբաղի հայ հասարակությունը: Ամենուրեք գյուղերում և քաղաքներում հասարակական վճիռներ էին կայացնում՝ բաց անելու առաջին և երկրորդ աստիճանի դպրոցներ: Եթե նախկինում հայ կրթական գործիքներից շատերն անձնական նախաձեռնությամբ բացում էին մասնավոր դպրոցներ, ապա այժմ նրանք ևս նախընտրում էին աշխատել նոր տիպի ազգային դպրոցներում, որտեղ ստեղծվել էին համեմատարար տանելի պայմաններ: Այդ ժամանակաշրջանում նոր տիպի դպրոցներում դասավանդում էին Ծուշիի թեմական դպրոցի ռեալական ուսումնարանի ուսուցիչները և նրանց սաները: Նկատի ունենք՝ Ար. Քամայյանին, Լ. Վարդունուն, Ար. Առաքելյանին, Գր. Ներսիսյանին, Հ. Սարգսյանին, Հ. Խաչատրյանին, Լ. Թահիսուացյանին, Գր. Ղարաբերյանին և շատ ուրիշների:

Հարկ է նշել, որ նորաստեղծ հոդրոդային Հայաստանի հանրապետության կուսակցական պետական օրգանները, լուսավորության աշխատողները անգնահատելի օդգնություն են ցույց տվել Լեռնային Ղարաբաղում եղած դժվարությունները համեմատարար կարծ ժամանակամիջոցում հաղթահարելու և նոր տիպի դպրոց ստեղծելու գործում:

Հայտնի է, որ ազգամիջյան ընդհարումների մռայլ տարիներին քայլքայվել են տնտեսությունը, ավերվել դպրոցական շենքերը, բնակչության մի մասը արտագաղթվել է հարազատ բնակավայրերից. վիճակը անմիտթար էր հատկապես ժողովրդական կրթության ասպարեզում: Զկային մասնագետներ, ուսուցչական կադրեր, ավելորդ է խոսել ուսումնադաստիարակչական աշխատանքների նվազագույն պայմանների՝ ուսումնական շենքերի, դասագրքերի ու ձեռնարկների և օժանդակ այլ հարմարությունների մասին:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՆՈՒՅԹ ՀԱՍԱՏԱՐԱՆԻ ԼՐԱՑՈՒ 2015

Վերոհիշյալ ուսումնական տարիներին Լեռնային Ղարաբաղում նորաբաց առաջին աստիճանի դպրոցները գուրկ էին ուսումնական ամենաանհրաժեշտ գրենական պիտույքերից, դիդակտիկ նյութերից: Դպրոցները չունեին կարինետներ և լաբորատորիաներ: Դպրոցական շենքերի բացակայության հետևանքով դասերը տեղի են ունենում մասնավոր տներում, նույնիսկ՝ խոճիթներում: Գոյություն չունեին նաև դպրոցական միասնական ծրագրեր ու դասագրեր: Ծանր էր նաև ժողովրդական ուսուցիչների կյութական վիճակը: Եվ, չնայած ուսուցիչները ազնիվ ու ժանր աշխատանքի համար չնշին վարձատրություն էին ստանում, այնուամենայնիվ, հաճախ էլ ծրի, անվճար պարապում էին դպրոցում: Ժողովրդը հոգատար վերաբերունք էր ցուցաբերում ազնիվ ու հայրենասեր ուսուցիչների նկատմամբ:

Ասպիսով, վերլուծելով փաստագրական տվյալները, պարզ երևում է, թե ինչ վիճակի մեջ էր գտնվում ժողովրդական կրթության գործը Լեռնային Ղարաբաղում՝ խորհրդային իշխանության հաստատման նախօրյակին: Իսկ Ղարաբաղում 1920-1923 թվականներին ժողովրդական կրթության կազմակերպմանը նպաստող նախապայմաններից մեկը եղել է նորաստեղծ Հայաստանի Հանրապետության լուսավորության աշխատղների անգնահատելի օգնությունը՝ ուսումնական ծրագրերով, դասագրերով, ձեռնարկներով, պլաններով ու մանկավարժական կադրերով ապահովման գործնարարությամբ:

\* Հետազոտությունը իրականացվել է ԼՂՀ ԿԳՆ կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ N SCS «Արցախի կրթական համակարգը 5-21-րդ դարերում» գիտական թեմայի շրջանակներում:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

1. Ավանեսյան Ա., Բնական գիտությունների դասավանդումը Շուշիի ռեալական ուսումնարանում, Շուշիի ռեալական ուսումնարանի հիմնադրման 120-ամյակին նվիրված «Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու», 22-23 նայիս 2001թ. «Դպրոցների պատմության դերը միասնական կրթական տարածքի ծևավորման գործում», Շուշի-Ստեփանակերտ, 2001:
2. Կիսիբեկյան Ար., Հուշեր, էջ 357, «Առասպել» հրատարակություն, Եր., 2011:
3. Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарий, том 1. Составитель, ответственный редактор, док. юрид. наук, профессор Ю.Т.Барсегов. М., 2008.
4. Տեր-Գասպարյան Ռ., «Շուշի», ՀԳԱ, իր., Եր., 1993, էջ 96-97:
5. Լեռ, «Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական....»
6. Խաչատրյան Ա., Հարությունյան Գ., «Շուշիի մանկավարժական ուսումնարանը», Ստեփ., 2006, էջ 8-9:
7. Քանայան Ար., Զեկուցագրեր: Դօքլադы с 1923-1934гг, стр. 64.
8. Կիսիբեկյան Ար., Հուշեր, «Առասպել» հրատարակություն, Եր., 2011, հատ.1 էջ 236:
9. Աղաջանյան Մ., «Հաթերք», «Դիզակ պյուս» իր., Ստեփ., 2012, էջ 237:
10. Խաչատրյան Խ., «Տումի», Եր., 2003, էջ 89:
11. Մելքոնյան Ս., «Ճարտար», Եր., 2012, էջ 188:
12. Հարությունյան Գ., «Ժողովրդական կրթության զարգացումը Լեռնային Ղարաբաղում», Եր., 1985, էջ 93-94:

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

Դպրոցական գործի վիճակը Արցախում խորհրդային  
իշխանության հաստատման առաջին տարիներին (1920-1923թթ)  
Արպատ Ավանեսյան, Գրիշա Հարությունյան

Արցախը Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո բախվեց ցարական կառավարության ռեակցիոն ազգային ճնշման բազմաբնույթ դրսերումների հետ: Իրականացվող քաղաքականությունը առանձնակի ցավալի էր արտահայտվում ժողովրդական կրթության բնագավառում: Հայկական դպրոցներում հաճախակի արգելվում էր մայրենի լեզվի դասավանդում: Ժողովրդական կրթության վիճակը ավելի վատացավ հատկապես 1918-1920թթ.: Տնտեսության լիակատար քայլայման, ազգամիջյան կրիվների ու քաղաքական իրադարձությունների անբարենպաստ ընթացքի հետևանքով գորեթ դադարել էր գործելուց դպրոցական ցանցը:

Խորհրդային իշխանության կազմավորումից հետո Հայաստանի Հանրապետության պետական կառույցները անգնահատելի օգնություն ցուցաբերեցին Արցախում կարծ ժամանակամիջոցում նոր տիպի դպրոցական ցանց ստեղծելու գործում՝ այն հնարավորինս ապահովելով միասնական ուսումնական ծրագրերով, դասագրքերով, գրենական պիտույքներով և այլն:

**Բանալի բառեր՝** դպրոցական գործ, ազգային դպրոց, ժխական դպրոց, տարրական դպրոց, ռեալական ուսումնարան, առաջին և երկրորդ աստիճանի հանրակրթական դպրոց, տարրական և միջնակարգ դպրոց, դպրոցական խորհուրդ, միասնական ծրագրեր և դասագրքեր:

## РЕЗЮМЕ

**Состояние школьного дела в Арцахе в первые годы установления Советской власти (1920-1923гг.)**  
**Арпат Аванесян, Гриша Арутюнян**

После вхождения в состав Российской империи, Арцах столкнулся с разного рода проявлениями реакционного национального давления царского правительства. Проводимая политика особенно болезненно проявлялась в сфере народного образования. В армянских школах часто запрещалось преподавание армянского языка. Состояние народного образования еще больше ухудшилось в 1918-1920 годах. Система школьного образования практически перестала действовать в результате распада экономики, междоусобных войн и неблагоприятного хода политических событий.

После установления Советской власти, государственные органы Республики Армения оказали неоценимую помощь, создав в Арцахе за короткий период времени школьную сеть нового образца и оснастив ее, по возможности, единными учебными программами, учебниками, письменными принадлежностями и т.д.

**Ключевые слова:** школьное дело, национальная школа, церковно-приходская школа, начальная школа, реальное училище, общеобразовательные школы первого и второго уровня, начальная и средняя школы, школьный совет, совместные программы и учебники.

## SUMMARY

### The situation around primary education in Artsakh in the first years of Soviet Power (1920-1923)

Arpat Avanesyan, Grisha Harutyunyan

After becoming the part of the Russian Empire Artsakh faced diverse manifestations of reactionary ethnic pressure of the Tsarist government.

Implementing policy produced great impact on the field of popular education. Mother tongue teaching was frequently forbidden in the Armenian schools. The state of popular education worsened especially in 1918-1920. As a result of complete economic disaster, internecine conflicts and negative course of political developments the school education network had ceased to operate.

After the establishment of the Soviet Power state authorities of the Republic of Armenia provided invaluable assistance in the process of founding in Artsakh a school network of new type within a short period of time, providing it as much as possible with joint educational programs, textbooks, writing implements.

**Keywords:** *schooling, national school, parochial school, elementary school, a vocational school, first and second level secondary schools, primary and secondary schools, the school board, joint programs and textbooks.*